Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ (1590—1639 թթ.)

1590 թ. Կոստանդնուպոլսում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիան մասամբ ֆրագործեց քաղաքական և տնտեսական իր ծրագիրը, գավթելով Անդրկովկասի ու հարավային Ադրբեջանի կարևորագույն առևտրական ուղիները։ Քոչվորական ու ագրարային երկիր հանդիսացող ու ֆեոդալական մասնատվածությունից ուժասպառ եղած Իրանը շոշափելի ռազմական ու բարոյական պարտության մատնվեց։ Նվաճված ընդարձակ տերիտորիայի հարստությունը, նախ և առաջ մետաքսի հումքը, բացահայտ կերպով սկսվեց կողոպտվել օսմանցի ֆեոդալների կողմից, բնակչությունը ենթարկվեց ծանր հարկատվության, կեղեքման ու կրոնական հալածանքի։ Տեղական ֆեոդալների տիրույթները կամ հափշտակեցին, կամ նրանց պարտավորեցրին արքունի գանձարանին միանվագ խոշոր վճարումներ կատարել։ Այդ բոլորը չէր կարող ընդհանուր դժգոհություն չառաջացնել նվաճողների նկատմամբ և՛ ֆեոդալների և՛ բնակչության շրջանում։

Այսպիսի իրադրության մեջ տեղական ֆեոդալները իրենց տիրույթների փրկությունը տեսան Իրանի երիտասարդ Շահ-Աբաս I (1587—1628 թթ.) ռազմական միջամտության մեջ։ Վերջինիս հաջողվել էր Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագրի (1590 թ.) կնքումից հետո ընկած կարճ ժամանակամիջոցում ապահովել իր արևելյան թիկունքը ուզբեկների ներխուժման մշտական վտանգից, սանձահարել կենտրոնախույս քոչվոր ֆեոդալների մի մասի դիմադրությունը և երկրում անցկացնել ռազմական ռեֆորմ՝ վերակառուցելով Իրանի պաշտպանությունը Թուրքիայի օրինակով։

Այսպիսով, Իրանի արյունռուշտ նոր դեսպոտն ու «աւերողն Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց ազգին» Անդրկովկասի ֆեոդալների կողմից դիտվում էր որպես հույսի ու փրկության ապավենի[1]։

«Բազումք ոմանք,—գրում է Առաքել Դավրիժեցին,—յաշխարհէս Ատրապատականի իշխանք և կողմնակալք մահմետականք և քրիստոնեայք գնացեալ էին առ թագաւորն պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զոնոսա աղգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ և կեղերմամբ զրկէին և կողոպտէին և հաւատոց կուռեճութիւն (խստություն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին ոչ միայն զգաս հայոց, այլև զգաս վրաց և զմահմետականաց (ադրբեջանցիներ) և վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն գտցեն զերծնալք ի ծառայութենէն օսմանցւոցն»[2]։

---

1 Հետաքրքիր է նշել, որ այդ տարիներին արտագրված ձեռագրերի հիշատակարաններում գրիչներից ոմանք կարծես գերադասում են պարսկական տիրապետությունը օսմանյանից։ Ամենամռայլ գույներով նկարագրելով օսմանյան տիրապետությունը Հայաստանում, նրանք որոշ հույսեր են կապում Շահ-Աբասի անվան հետ։ Այսպես՝ Խիարաj գյուղից 1601 թ. Ղազար գրիչը գրում է. «...յաւուրս նորին (իմա՝ սուլթան Մուհամմեդին—Մ. Զ.) այնչափ հալածումն լինել քրիստոնէից մինչև հայրն զորդիս վաճառէինն։ Հակադրելով թուրքական սուլթանը Շահ-Աբասի հետ, նա շարունակում է. «...երանի էր մեզ, թէ թագաւորել ի վերա մեր զնա տեսանէքն» (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր, № 2845, էջ 267բ)։

1604 թ. Խիզանում արտագրված ավետարանի հիշատակարանում Սարգիս քահանան Շահ-Աբասին անվանում է «էդիլ փաթշահ» (այսինքն՝ «արդար թագավոր»)։ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր, № 6420, էջ 338։

2 Պատմութիւն Առաքելայ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 15։

Շահին դիմող ֆեոդալների մեջ Առաքել Դավրիժեցին հիշատակում է մի շարք քուրդ, վրացի և հայ հողևոր ու աշխարհիկ մեծամեծների, որոնց թվում Գեղամա մելիք Շահնազարի և Քշտաղի մելիք Հայկազի անունները, Դիզակի չորս գյուղերը և Ագուլիսի Դաշտ կոչված գյուղի «երեք մասրա»[3]։

«Եւ է պատճառ դիզակեցւոց և դաշտեցւոց գնալոյն,—գրում է վերջինների գաղթելու մասին պատմագիրը,—ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կուռեճութիւն առնելն, և անխնայ սպանանելն պարիստոնեայսն։ Այս բոլորի հետևանքով «եղեալ են ամենեքեան յոյժ չքաւորք, և պարտաւորք, և մնացեալ են անճար։ Վասն որոյ փախուցեալ գնացին յերկիրն պարսից»[5]։

Ֆեոդալներն, ըստ պատմագրի, իրենց հերթին մտածում էին. «...Մտերիմք երևեսցին առաջին Շահին զուցէ թերեւս գիւրութիւն և օգտութիւն ինչ գտանիցեն ի նմանէ նեղութեանց և պարտուց իւրեանց»[6]։

Երբ Իրանում ամրապնդվում էր Շահ-Աբաս I կառավարությունը 16-րդ դարի վերջին սուլթանական Թուրքիան անկման նշաններ էր ցույց տալիս։ Դեռևս սուլթան Սուլեյման Կանունիի (1520--1566 թթ.) օրոք Թուրքիայի ներքին օրգանիզմում առաջացած խոցերը, Մուրադ III (1574—1595 թթ.) օրոք սկսել էին թարախակալվել։ Օսմանյան կայսրության հզորության հիմքը հանդիսացող նրա ռազմա-ֆեոդալական կառուցվածքը ներքին կրիզիս էր ապրում։ 21-ամյա իշխանության տարիներին Մուրադ III իր վարած անընդմեջ պատերազմներով ծայր աստիճան քայքայել էր երկրի ֆինանսական վիճակը։ Տարեցտարի ավելանում էր պետության դեֆիցիտը, հասնելով, 1596 թ. թուրքական աղբյուրների տվյալներով, 6000 յուկի[7]։ Դրամի խիստ կարիքն ինչպես պետության, այնպես էլ առանձին խոշոր ֆեոդալների մոտ տեղի էր տալիս ամեն տեսակի չարաշահումների։ Կաշառակերությունն ընդունել էր մասսայական բնույթ։ «Ամենայն ունկն արծաթոյ լուիցէ»[8],— գրում էր դեպքերի ժամանակակից Գրիգոր Դարանաղցին։ Երկրում արմատներ էր գցել վաշխառությունը։ Պետական հողերն ու նրանցից ստացված եկամուտները մեծ մասշտաբով տրվում էին կապալառության։ Կապալառուները և երկրի տարբեր մասերում, հատկապես պետության տեսադաշտից հեռու արևելյան նահանգներում բացեիրաց կողոպտում էին ժողովրդին։ Ոչինչ կայուն չէր մնացել։ Ինքը՝ սուլթանական պետությունը իր «Հարեմական կառավարության» („Harem saltanatı") պահանջները բավարարելու համար դարձել էր մի տեսակ խոշոր վաշխառու։ Ընդունելով մեծ կաշառքներ, միևնույն վիլայեթի կամ միևնույն սանջակի կառավարումը միևնույն տարում հաջորդաբար կամ երբեմն միաժամանակ կառավարությունը տալիս էր մի շարք ֆեոդալների։ Բնութագրելով սուլթան Մուհամմեդ III (1595—1603 թթ.) օրոք ստեղծված համանման իրադրությունը, ժամանակակից Գրիգոր Դարանաղցին գրում է. «... եւ այս սուլթան Մուհամմատիս թոյլամորթ լինելոյն և անփոյթ առնելով աշխարհացն, որ ամենայն իշխանք և դատաւորք և զօրք և զօրականքն և բազումք ի յոռամիկ զօրացն և ի շինականացն նեղեալ և յանիրաւ զրկանացն և յափշտակութեանց ընչիցն և իշխանացն նեղեալ յանիրաւ դատաստանէ թագաւորին և վազիրացն, որ կաշառովք տային զիշխանութիւն գաւառապետութեանց և աշխարհակալութեանց և դատաւորութեանց, և տակաւին դեռ ի տեղին ոչ էին հասեալ մանզուլ (պաշտոնազուրկ) առնէին և զտեղի նորա այլ ումեմն տային»[9]։

Քայլ իմանալով իրենց իշխանության անհարատևությունը, օսմանցի ֆեոդալները ձգտում էին առավելագույն չափով շահագործել իրենց իշխանության ներքո գտնվող ազգաբնակչությանը և հատկապես գյուղացիությանը, անկախ ազգային պատկանելիությունից, պահանջելով նորանոր մտացա-

---

3 Առաքել Դավրիժեցի, էջ 16։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 17։

6 Նույն տեղում։

7 Մեկ յուկը (yük) հավասար էր 100.000 ակչեի, իսկ ակչեն (akçe) հայերեն ստակ) թուրքական դրամի միավոր էր արծաթից 4,8 գրամ քաշով։

8 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1918, էջ 260։

9 Նույն տեղում, էջ 14։ Նույն հեղինակը իր խմբագրած ժամանակագրության մեջ խոսելով Թուրքիայում ստեղծված անարխիկ վիճակի մասին գրում է. «Թվին ՌԽԳ (1594) մեռաւ սուլթան Մուրատն և նստաւ որդի նորա սուլթան Մահմատն, որ է այժմ ի մերումս ժամանակի, որ կատաղի և մոլեգին է դարձել, զրէ, թե չկա թագաւոր միայն ժանգ անուան է ի վերայ ներքոյ անկեալ երկրին։ Դատաստանն բարձաւ և ոչ կա քննութիւն և իրաւունս զրկելոց. դարձել են ձկունս մեծամեծս որ զփոքունս կլանեն...»։ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 271։

Լրաբեր 2—6

ծին հարկեր ու տուրքեր, որոնք մեծ մասամբ հայտնի էին բիդ'ատներ (bid'at —նորամուծություն) ընդհանուր անունով[10]։

Հսկայական հարստություն էր կուտակվել խոշորագույն ֆեոդալների ձեռքին[11]։ Այս հանգամանքն ավելի ևս ուժեղացնում էր վերջինների կենտրոնախույս ձգտումները և դրանով իսկ խիստ թուլացնում Սուլեյման Կանունիի օրոք ստեղծված կենտրոնացված օսմանյան պետականությունը։

Եվ, վերջապես, քայքայման պրոցեսը սկիզբ էր առել նաև պետության հենարան հանդիսացող ռազմա-ավատական սիստեմի մեջ։ Ավատական հողերի ժառանգականության սկզբունքը խախտվել էր։ Պետական հողային ֆոնդը վաճառվում էր ոչ-ավատական ու թուրքական աղբյուրներում բազմիցս շեշտված «օտար» („ecnebi") ծագում ունեցող մարդկանց[12]։

Երկրի ներսում ծայր առած ճգնաժամը, իհարկե, աննկատելի չէր կառավարող թուրք ֆեոդալներին։ Ճգնաժամից դուրս գալու ելքը նրանք գտան նոր պատերազմական ավանտյուրաների մեջ եվրոպական ճակատում[13]։ Այս պատերազմական գործողությունները բացի անհաջողությունից ուրիշ ոչինչ չբերեցին նրա սկսողներին։ Յուրաքանչյուր օր Կոստանդնուպոլիս էին գալիս նորանոր լուրեր՝ թուրքերի կրած ծանր պարտությունների մասին հունգարական և վալահական սահմաններում[14]։

1593 թ. Բոսնիայում ամբողջությամբ ոչնչացվեց Հասան փաշայի զորքը։ Այդ տարին օսմանյան պետության պատմության մեջ հայտնի է որպես «կազմալուծման կամ պարտության տարի» Bozgun senesi) անունով։

Եթե եվրոպական ճակատում թուրքերը լրիվ չջախջախվեցին, ապա դրա պատճառը Գերմանիայում ծայր առած կրոնական ներքին վեճերն էին։ Այդ հանգամանքը թույլ չտվեց օսմանցիների դեմ ընդհանուր հարձակում կազմակերպել։

Վերջ ի վերջո խռովության ալիքը բարձրացավ և օսմանյան պետության ներսում։ Երկրում ծայր առած ջելալիների կամ ջալալիների[15] հզոր ապստամբությունը, որը, ինչպես իրավացիորեն նկատում է Համմերը, «...երեսուն տարի շարունակ դարձավ կայսրության համար մի վերք, որից

---

10 Այսպիսի պայմաններում բոլորովին էլ պատահական չէ Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ նկարագրված սիմվոլիկ պատկերը։ Նկարված է այստեղ գալարվող մի օձ, որի մարմնի զանազան մասերից դուրս են ցցվում վիշապի գլուխներ, յուրաքանչյուրը սուլթաններից մեկի անունով, սկսած Օսմանից և վերջացրած Մուհամմեդ III-ով։ Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. 1-ին, էջ 165։

11 Այսպես, 16-րդ դարի վերջին մեծ վեզիր (Վեզիր-ի ազամ) Կոջա Սինան փաշայի հարստությունն հաշվվում էր 2 միլիոն 900.000 ակչե, 29 յուկ (բեռ) թանկագին քարեր, անհաշիվ թվով անշարժ գույքեր, մուլքի իրավունքով հողային հսկայական տարածություններ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների բազմաթիվ հոտեր և այլն (տես I. H. Danişmend, Izahlı Osmanlı tarihi Kronoloiisi, c. III, Istanbul, 1950, s. 162; I. Hammer, Histoire de l'empire ottoman, tome VII, Paris, 1837, էջ 313։

Ավելի մեծ ու փոքր չափի հարստություններ թողել են համարյա բոլոր մեծ վեզիրները և նամանավանդ Սինանի հաջորդներից Ռուստամ և Նասուհ փաշաները (նույն տեղում)։

12 Այս մասին ավելի ընդարձակ տես В. А. Гордлевский, Внутреннее состояние Турции во второй половине XVI века, Труды института востоковедения, сборник № 2, 1940 г.; А. С. Тверитинова, Восстание Кара Языджи-Деяи Хасана в Турции, Москва, 1946 г.; В. Д. Смирнов, Кучибей Гёмюрджинский и другие османские писатели о причинах упадка Турции, СПб, 1873 г.

13 Ժամանակակից թուրք պատմագրությունը միանգամայն սխալ ու տենդենցիոզ ձևով է բացատրում 16-րդ դարի վերջին եվրոպական ճակատում սկսված պատերազմի պատճառը։ Ըստ նրանց, պատերազմի վերսկսվելը ոչ թե ներքին ճգնաժամից դուրս գալու հետևանքով էր, այլ առանձին «դեվշիրմեի» (մանկահավաքի) միջոցով իշխանության գլուխ անցած առանձին անհատների, տվյալ դեպքում խոջա Սինան փաշայի «այդ հարբեցող դեվշիրմե ստահակի» դավաճանության արդյունք։ Ըստ նրանց, այդ ոչ թուրք ծագում ունեցող ֆեոդալներն էին, որ օսմանյան պետականությանը մղում էին դեպի կործանման անդունդը։ (Տե՛ս I. H. Danişmend, Նշվ. աշխատությունը, էջ 70, 94, 150, 188 և այլն։ I. Hammer, Histoire de l'empire ottoman, tome VII, p. 309; I. H. Danişmend. Նույն տեղում, էջ 123—124, 126, 127—128։

15 Սկզբնական շրջանում ջալալիներ էին կոչվում 1519 թ. Թոխաթի շրջակայքում բռնկված կրոնական երանգ ունեցող ու Ջելալի ղեկավարությամբ պետության դեմ ապստամբողները։ Հետագայում հակապետական բոլոր տեսակի շարժումները (գյուղացիական, քաղաքային ազգաբնակչու-

մշտապես արյուն էր կաթում»[16]։ Դա մի շարժում էր, որ կաթվածահար արեց օսմանյան պետության քաղաքական և ռազմական ապարատը և վճռական դեր խաղաց նրա անկման գործում։

Ջալալիների ապստամբությանը հետևեց 1600 թ. կայսրության մայրաքաղաքում բռնկված սիփահիների ապստամբությունը։ Այդ տարին թուրքական պատմագրության մեջ հայտնի է որպես «ապստամբության տարի»[17]։

Շահ-Աբասը ուշի-ուշով հետևում էր Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների ամենափոքր մանրամասնություններին, տեղեկություններ հավաքելով ամենքից և իր մոտ ապաստանած ֆեոդալներից։ Խորամանկ շահը,— գրում է պատմագիր Առաքել Դավրիժեցին,— «...սնոտի ու պատիր խաբեությամբ» բարեկամ ցույցաբերելով իրեն իր մոտ ապաստանած ֆեոդալներին, «...զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ, և զամենայն ուրախութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ (ընդգծումը մերն է—Մ. Ջ.) և զաշխարհակալ արանց իմացաւ»[18]։

Կոստանդնուպոլսի պայմանագրով, Անդրկովկասի կորուստը, Իրանի ղեկավարող շրջանները դիտում էին որպես ժամանակավոր երևույթ, գտնելով, որ այդ երկրամասը իրենց ժառանգական «հայրենի աշխարհն» է։ Այս տեսակետից վերին աստիճանի ուշադրավ են Առ. Դավրիժեցու մեջ բերած Զուլֆիղար խանի դիմումը Նախիջևանում պաշարված օսմանյան կայազորին։ Շահ-Աբասի այդ զորավարը, հորդորելով կայազորին անձնատուր լինել, ասում էր, պաշտպանությունը զուր է, որովհետև գալիս է «ինքնակալ թագավորը բազում զօրոք» և խնդրում է «զհայրենի աշխարհն իւր»[19] (ընդգծումը մերն է—Մ. Ջ.)։

Նախքան օսմանցիների դեմ պատերազմ սկսելը, Շահ-Աբասը դեսպանություններ է ուղարկում Եվրոպա, Մոսկվա, Գերմանիա, Իտալիա (Վենետիկ, Տոսկանա) և Հռոմի Պապի մոտ՝ Թուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու համար[20]։

Շահին մնում էր միայն պատերազմի առիթը, որը շուտով ներկայացավ։ Դժգոհ օսմանցիների տիրապետությունից՝ Սալմաստի բեկ քուրդ Ղազին ապստամբում է օսմանցիների դեմ և շահի օգնությանը դիմում հորդորելով նրան շարժվել դեպի Թավրիզ և սկսել պատերազմը օսմանցիների դեմ[21]։

Օգտագործելով ստեղծված հարմար առիթը, 1603 թ. սեպտեմբերի 14-ին (7 ռեբի-ուլ-ախիր), Շահ-Աբասը մի քանի հազար զինվորների գլուխ անցած Սպահանից սրընթաց շարժվում է դեպի Թավրիզ։ Ճանապարհին նրան է միանում Արդեբիլի կառավարիչ վերոհիշյալ Զուլֆիղար խանը՝ իր մի քանի հազար մարդկանցով։ Շուտով Շահ-Աբասը մտնում է Թավրիզ։ Օսմանցիների բռնություններից ձանձրացած՝ Թավրիզի բնակչությունը մեծ խանդավառությամբ դիմավորում է շահին։

Սեպտեմբերի 29-ին (22 ռեբի-ուլ-ախիր), Թավրիզից հյուսիս-արևմուտք ընկած Սոֆյանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը պարտվում են ու նահանջում դեպի նա-

---

թյան կամ առանձին ֆեոդալների) սկսեցին անվանել ջելալիների շարժում (տե՛ս Ahmet Refik, On altıncı asırda Rafizilik ve Bektaşlik (1558—1591). Istanbul, 1932, էջ 8—9։

[16] I. Hammer, Histoire de l'empire ottoman. հատ. VII, էջ 370։

[17] Kâtip Çelebi, Fezleke, հատ. I, էջ 202։

[18] Առաքել Դավրիժեցի, էջ 18։

[19] Նույն տեղում, էջ 23։

[20] I. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 38; Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVIII вв., Москва, 1946 г., էջ 140, 151, 257 այլն։

[21] Katip Çelebi, Fezleke, հատ. I, էջ 204։

Առ. Դավրիժեցի, էջ 15։

Ընդհանրապես պետք է նշել, որ քուրդ Ղազիի ապստամբությունը օսմանցիների դեմ եզակի երևույթ չէր։ Դժգոհ օսմանյան տիրապետությունից և ջալալիների շարժման հետևանքով երկրում ստեղծված անարխիայից, բազմաթիվ քուրդ բեգեր անցան Իրանի կողմը։ Թուրքական օկուպանտները նույնպիսի ոտնձգություններ էին կատարում քուրդ բեգերի նկատմամբ՝ հափշտակելով նրանց ունեցվածքը։ Թուրքական ժամանակագրություններում նշվում է, որ «ռայաթի ունեցվածքի հափշտակությունից հետո» (emval-i reaya gaaretinden sonra), «էմիրների և հաքիմների», այսինքն ֆեոդալների (emval-i ümera ve hükkaminda yağmaya kalkışip) ունեցվածքն նույնպես հափշտակեցին (տես I. H. Danişmend, նույն աղբյուրում, էջ 225։

խիչեան, սակայն Թավրիզի բերդը գրավվում է միայն հոկտեմբերի 21-ին (15 ջեմազուլ-էվվել), այսինքն շուրջ երեք շաբաթ գիմադրությունից հետո[22]*։*

Տեսնելով, որ անհնարին է կասեցնել դեպի Նախիջևան արշավող պարսկական բանակի սրընթաց առաջխաղացումը, օսմանցիները «...ինչ և կարացին կողոպտել ի մերձակայ գեղօրէիցն. կողոպտեալ աւարացին՝ և ժողովեցան ի Նախչուան»[23]*։*

Հոկտեմբերի 26-ին (20 ջեմազուլ-էվվել) օսմանցիները հեռանում են Նախիջևանից։

Նախիջևանի անկմանը հետևում է Երևանի պաշարումն ու գրավումը պարսիկների կողմից, որը տեղի է ունենում նոյեմբերի 15-ին (10 ջեմազուլ-ախիր)։ Սակայն Երևանի այսպես կոչված «Նոր բերդը» (Kala-ıcedid)[24] *գրավվում է միայն վեց ամիս պաշարումից հետո, 28 մայիսին (28 շիլհիջե) 1604 թ.*[25]*։*

Երևանը ենթարկվում է ավերածության։ Շահը «Երևանը քանդեց, այրեց ու հողի հետ հավասարեցրեց»[26]*,— գրում է Ի. Փեչևվին։*

Արարատյան դաշտավայրում, շահը որպես թնդանոթի միս օգտագործում էր տեղի հայ ու ադրբեջանցի բնակչությանը։ Նա «բռադատ» (ıraqi— *կամավոր բառից) անունով զումարտակներում հավաքագրում էր տեղացի բնակչությանը, քշելով նրանց ռազմաճակատի ամենավտանգավոր տեղերը, ուր և նրանք ոչնչանում էին։*

Երևանի բերդի գրավումից հետո շահը ասպատակեց Սևանա լճի, Շիրակի ու Լոռու շրջանները, անխնա թալանելով ու բռնություններ գործադրելով բնակչության նկատմամբ։ Նախավկայի վանքում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի դառն և ի նեղ ժամանակին, որ որդի խուտաբանտային եբեկ Սպահանայ... գերեաց զազգն քրիստոնէից և խիզանն հայական ազգին որպէս զարինս վաճառէին միմեանց և... անմեղ մարդիկ կոտորեցին և շատ անմեղ տղայք ի գրկից մաւրն խլէին... և զազգն Հայոց վաճառին»[27]*։*

---

22 *Իրանագետ Հ. Դ. Փափազյանը, ըստ երևույթին հենվելով Մատենադարանի պարսկական մի փաստաթղթի վրա, Թավրիզի գրավումը թվարկում է սեպտեմբերի 28-ին և Սոֆյանի ճակատամարտը հետնորդում է Թավրիզի գրավմանը (տե՛ս Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Երևան, 1959, 2-րդ մաս, էջ 13։ Մինչդեռ Սոֆյանի ճակատամարտը նախորդում է Թավրիզի անկման դեպքին։ Այդ պարզորոշ կերպով վկայում են ինչպես թուրք, այնպես էլ հայ աղբյուրները։ Այսպես՝ հենվելով Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե» աշխատության վրա Համմերն, օրինակ, գրում է. «1603 թ. սեպտեմբերի 25-ին (19 ռեբիուլ ախիր) տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ օսմանցիները պարտվեցին պարսիկների թվական գերակշռության տակ...։ Օսմանցիների պարտությանը հետևեց Թավրիզի անկումը», ըստ որում բերդի գրավումը տեղի է ունենում հոկտեմբերի 21-ին։ Տես* I. H a m m e r, Histoire de l'empire ottoman, *հատ.* VIII, *էջ 39—40։ Նույն ձևով են մեկնաբանված թուրք աղբյուրների վկայությունները թուրք պատմաբաններ Դանիշմենդի, Ուզունչարշըլիի և մյուսների մոտ* (I. H. Danişmend, *նույն տեղում, էջ 226)։*

Առավել պարզ են վկայությունները Դավրիժեցու մոտ. «Յաւուրս յայսսիկ,— գրում է նա,— ...եկն շահն և եհաս ի Թարվեզ, յեթող զքաղաքն և անցեալ եկն ընդդեմ զօրացն օսմանցւոց։ Իսկ օսմանցիք իբրև զգացին զգալն պարսից և իմացան ստուգիւ թե շահն ինքն է, քանզի յառաջ համարեցան, թէ զօրապետ ոմն իցէ, և իսկոյն թողեալ զպատերազմն բերդին, դարձան և եկին մերձ ի գիւղն Սոֆիան, և անդէն ի դաշտին Սոֆիանու խմբեցան ի պատերազմն յանդուգն բախմամբ»։ Այնուհետև «...եւ յետ վանելոյ պատերազմին եկն շահն՝ և եմուտ ի Թաւրեզ, և կալեալ տիրեաց ղաղաքին և ամենայն զաւառացն» *(ընդգծումը մերն է—Մ. Զ.), Ա ռ. Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 19—20։*

23 *Ա ռ. Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 21։*

24 *Այդ բերդը թուրքերն շտապ կարգով կառուցել տվեցին՝ բռնի աշխատանքի լծելով հարյուրավոր մարդկանց։ Առաքել Դավրիժեցին բերդի կառուցման մասին գրում է. «Եվ ի հարավային կողմն (հին) բերդին Երևանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ և շինեցին միւս ևս բերդ և մտին ինքեանք (օսմանցիները) ի ներս պատերազմական զինուքն» (Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 21—22)։ Բերդը նոր էր կոչվում, որպեսզի տարբերվեր 1583 թ. Ֆերհադ փաշայի կառուցած «Հին բերդից»։*

25 K a t i p Ç e l e b i, Fezleke, *հատ.* I, *էջ 218.* I. H a m m e r, Histoire de l'empire ottoman, *հատ.* VIII, *էջ 59.* I. H. Danişmend, *նույն տեղում, էջ 232։*

26 I. P e ç e v i, Tarih-i Peçevi, *հատ. 2, էջ 261։*

«وقلعه روانی یاقوب بیقوب خاکه برابر ایلدی»

27 *Տե՛ս Ա. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, Երևան, 1959, էջ 83։*

Թշնամու անակնկալ հարձակումներից իր թիկունքն ամրապնդելու համար, շահն այդ նույն ժամանակ զորքերն ուղարկում է Անդրկովկասի այլ և այլ վայրեր՝ նվաճումների ու ավարառության համար։

Այսպես, նա Ամիրգունա խանին ուղարկում է Գանձակ, որը «...ուր և կարաց հասանել, հրոյ ճարակ տուեալ և սրոյ մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յզփութիւն բանակին պարսից»[28]։

Դեռ պաշարված էր Երևանը, երբ շահը հրամայեց իր զորավարին ասպատակել և ավերել Արևմտյան Հայաստանի գավառները և բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտավայր ձմռան սառտիկ օրերին։

«Իսկ շահն միշտ նստեալ ի վերայ բերդին Երևանու պատերազմէր ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազգս Հայոց. քանզի առաքեաց զօրագլուխս բազում զօրօք ի կողման Արդրումայ որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու, և զԽնուսայ՝ և զդաշտն Արդրումայ՝ և զայլս ուր և կարացին հասանել, քանդեալ՝ աւերեալ այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ և զարս սպանել, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ բերին յԵրևան ի բանակն Իրանց։

Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս՝ որք գնացեալ արարին ըստ վերոյ ասեցելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմեռայնոյ»[29]։

Արևմտյան Հայաստանի գավառներում Ալահվերդի խանի կողմից կատարված ավերման և ավարման, բնակչության գերեվարման ու բռնի տեղահանման պատկերը հետևյալ կերպ է նկարագրում մեր պատմագիրը. «...Եւ յարձակեցաւ (խանն) ի վերայ գաւառաց աշխարհի և զամենայն երկիրն Արճկեոյ հաւասար աւերեաց, և հրդեհ արկեալ այրեաց. և զամենայն արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս, և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ։ Եվ ելեալ անտի եկն Արճեշ՝ և ի Բերկրի, և ի Վան. և յամենայն գաւառս նոցա արար այնպէս... և ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անգնոց, և ջոկս ոչխարաց, և երեմակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԵրևան ի լիութիւն բանակին պարսից»[30]։ Արարատյան դաշտ քշված բնակչության թիվը մի հիշատակարանում հաշվվում է 60.000 մարդ, առանց սպանվածների ու մահացածների[31]։

Միայն վերոհիշյալ Ալահվերդի խանը Արճեշից, Բերկրիից ու Վանից տեղահան արեց 23.000 հայերի[32]։

Այս բոլոր իրադարձությունները տեղի էին ունենում. սուլթան Մուհամմեդ III թագավորության օրոք, իսկ երբ իշխանությունն անցավ նրա հաջորդ սուլթան Ահմեդի ձեռքը, ապա հսկայական բանակով Արևելք ուղարկվեց ծագումով իտալացի Ջղալ օղլի Սինան փաշան (Cicala) Դեպի Էրզրում ճանապարհին Ջղալ օղլու խորամանկ բանակցությունների հետևանքով ջալալի ապստամբների մի շարք ղեկավարներ, սովից ու երկարատև, մեծ մասամբ անհաջող, պատերազմներից կատաղած ու ավարառության սովոր զորքերով միացան արշավող օսմանյան բանակին։ Ճանապարհին, ջալալիները «կողոպտէին, թալանէին, զոր ինչ գտանէին ի պէտս կերակրաց մարդոց և անասնոց և ի ձեռս անկելոց մարդոցն՝ վերին աշխարհաց շար զուշիցն նման առնէին, զերկորիսն ծամէին և այլ զանազան տանջանօք կու չարչարէին թե՝ հոր գարոյ և ցորենոյ ցոյց տուր, կամ այլ կարասիս ընչից և ստացածոց գանձեաց, զոր թաքուցեալ էք բեղ հողով։ Եւ չարչարեալքն զոր ինչ որ գտանէին, ցուցանէին՝ թէ իւրն էր, թէ այլոց։ Եւ այլ զոր ոչ գիտէին՝ զի՞նչ ասէին և կրկին գառն տանջանօք չարչարելով սպանէին գնային»[33]։

Սա չարիքի սկիզբն էր միայն։ Սինան փաշայի զորքերի թվական գերակշռության առաջ Շահ-Աբասը ստիպված եղավ նահանջել՝ հրաման արձակելով, բռնի տեղահանված ու Արարատյան դաշտավայրում հավաքված հայ ու ադրբեջանցի բնակչությանը, ինչպես և տեղացիներին բռնի կերպով քշել դեպի Պարսկաստան։

Վերը նշված հրեշային հրամանը շուտով ի կատար ածվեց։ Իր զարհուրելի մտադրությունն իրականացնելու համար շահը դիմեց խորամանկության։ Նա իր մոտ կանչեց «զմենծամեծս երկ-

---

28 Ա ռ. Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 27։

29 Նույն տեղում, էջ 30։

30 Նույն տեղում, էջ 32—33։

31 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 5315, էջ 208 ա և բ։

32 Ա ռ. Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 33։ «... Դերեցան այսքան անձինք քրիստոնեից զորոց թիւն ԻԴՌ (23.000), ասեն զոլ՝ թող զսպանեալսն»։

33 Գ ր. Դ ա ր ա ն ա ղ ց ի, էջ 43։

րից Հայոց», ինչպես գրում է Առ. Դավրիժեցին, հորդորելով նրանց համաձայնվել ժամանակավորապես տեղափոխվել Պարսկաստան՝ օսմանյան զորքերի ասպատակություններից զերծ մնալու համար։ Իրականում շահի ստրատեգիական նպատակն էր ամայացնել երկիրը, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը և որ գլխավորն է՝ բռնի տեղահանվող բնակչությունը ամեն կերպ պիտի նպաստեր Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը։ Առաքել Դավրիժեցին այսպես է բացատրում այդ բռնի տեղահանության պատճառը. «Զի եկեալ օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գտցի կերակուր և ոոճիկ և այդ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց։ Նաև ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատու՝ ծառայք. և հողագործք մինչև ցյաւիտեան»[34] (ընդգծումը մերն է—Մ. Զ.)։

Հետագայում Անդրկովկասի երկրներից բնակչության բռնի տեղահանման պրակտիկան շարունակվեց մինչև իսկ 1612 թ. ժամանակավոր զինադադարը։ Հենվելով այս փաստի վրա, պրոֆեսոր Ի. Պ. Պետրուշևսկին գալիս է այն եզրակացության, որ բռնի տեղահանումը առավելապես նպատակ ուներ գյուղացիներին ամրացնել հողին և առավելագույն չափով շահագործել նրանց[35]։

Ուշադրություն չդարձնելով հայերի «ավագանիների» դիմադրությանը, Շահ-Աբասը Ամիրգունա խանին հանձնարարում է՝ «ուր և կարասցեն ձեռնարկել, արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամենևին շունչ կենդանի, եթե քրիստոնեայ և թե մահմետական, զհաւանեալսն բանիւ, և զոչ հաւանեալսն և զստունդանոցսն հրամանաց թագաւորին, սրով՝ և մահուամբ՝ և գերութեամբ»[36]։

Այսպիսով, ոչ միայն հայ, այլև ադրբեջանցի ու մասամբ վրացի բնակչությունը քշվում էր դեպի Պարսկաստան։

Երկրից գաղթեցվող բնակչության շարասյունը, Դավրիժեցու ասելով, «...ածեալ բերեալ հասուցին ի դաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ, քանզի ի ստորոտէ լեռանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, ի զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ»[37], այսինքն մոտ 30—40 կիլոմետր ճանապարհ։

Տասնյակ հազարավոր զոհերի գնով, գաղթական զանգվածն անցավ Արաքս գետը։ Նրանց կրած անլուր տառապանքների, սովի, կամայականությունների, հայ կանանց ու աղջիկների լլկումների բազմաթիվ դեպքերի, գազազած պարսիկ հրամանատարների կատարած վայրագությունների, ջրահեղձման դժնդակ պատկերների մասին մանրամասն գրված են Առաքել Դավրիժեցու «Պատմութեան», ձեռագրերի հիշատակարանների[38], հայ կաթոլիկ քահանա Ավգուստինոս Բաջեցու[39] և այլոց գրած էջերում։

Զարհուրելի դեպքերը խորը կսկիծով նկարագրելուց հետո Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ,

---

34 *Առ. Դավրիժեցի, էջ 38։*

35 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—нач. XIX вв. Ленинград, 1948 г., *էջ 252—253։*

36 *Առ. Դավրիժեցի, էջ 40։*

37 *Նույն տեղում։*

38 *Այսպես Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 1282, էջ 261բ, 262ա. կարդում ենք. «...զոճիրս չարութեան և զառ և զաւար գերութեան զոր պարսիկք ընդ հայք արարին, առաւել է քան զբաբելացւոցն առ իսրայելացիսն, զոր ոչ ոք կարէ մի ըստ միոջէ պատմել և կամ ընդ դրով արկանել. զի սկսեալ ի տաւնն Շիրակայ մինչև ի Ջուղայ և տուն Դողթնեաց զհայք բնաջինջ արարեալ տարեալ հանին ի խորին պարոիկս, ի Շօշ և յԱսպահան կաթողիկոսով և եպիսկոպոսօք, քահանայիւք և ժողովրդովք, արամբք և կանամբք, ընչիւք և գոյիւք. և թողին զդաշտն Արարատեան և գնստիպաւան նահագօքն և զփարթամ ճոխութեամբ զՋուղայ շրջագայուքն ամայի ու թափուր ի բնակչացն...»։ Համանման հիշատակարաններ կան հետևյալ ձեռագրերում.*

Ձեռագիր № 5345, էջ 206բ—207 բ, № 4692, էջ 613 բ, № 6093, էջ 355 բ, 3843, էջ 189բ, № 5057, էջ 293ա, № 4721, էջ 655բ—656ա, № 4515, էջ 363, 364—365, 369, 373—374, Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ. Մագիստրոսի (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի) գործերը, թղթապանակ № 8, էջ 86, № 10, էջ 341, № 11, էջ 19, 23, 29—35, և բազմաթիվ տպագիր հիշատակարաններ։

39 Itinéraire du très révérend frère Augustin. Badjetsi, traduit par M. Brosset Journal Asiatique.

և այք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ»[40]։

Տեղահանումը ոչ միայն մարդկային մեծ զոհեր տվեց, այլև ամայի դարձրեց երկիրը։ Հայադուրկ դարձան Հայաստանի շատ գավառներ, մանավանդ Այրարատը[41]։

Միայն Հայաստանի որոշ լեռնային մասերում, այրերում և անտառներում բնակչության մի մասին հաջողվել էր խուսափել տեղահանությունից, տեղ-տեղ դիմադրություն ցույց տալով պարսիկներին։ Այդպես վարվեցին օրինակ գառնեցիները, որոնք Դավրիժեցու պատմելով, «սրով և բահով, քարիւ և փայտիւ» հարձակվեցին Ամիրգունա խանի պատժիչ ջոկատների վրա։ Պիտի ենթադրել, որ Հայաստանի այլ վայրերում էլ եղել են համանման դինված դիմադրություններ։

Երկու հարյուր հազար բանակով հասնելով Կարս, Ջղալ օղլի Սինան փաշան տաս օր այնտեղ մնում ու այնուհետև շարժվում է դեպի Նախիջևան և իր գրած նամակներով շահին զբրգռում էր ու ստիպում պատերազմի բռնվել օսմանցիների հետ։ Սակայն շահը իր համեմատաբար փոքրաթիվ բանակով հրաժարվում է ճակատամարտել օսմանցիների հետ և հրամայում հրկիզել ու քանդել ճանապարհին ընկած վայրերն ու ցանքսերը։ Ամբողջ երկրամասը ավերված ու ամայացված լինելու և շահի դեպի Թավրիզ նահանջելու պատճառով, Սինան փաշան որոշում է ձմեռն անցկացնել Շիրվանում, իսկ գարնանը վերսկսել պատերազմական գործողությունները։ Սակայն նրա ծրագիրը հանդիպում է կատաղած ենիչերիների դիմադրությանը, որոնք պահանջում էին ձմեռն անցկացնել «Ռումի երկրում», այսինքն Փոքր Ասիայում։ Սինան փաշան իր զորքը քաշեց դեպի Վան, սակայն շուտով պարսիկները պաշարեցին այն։ Սինան փաշան ստիպված Վանա լճի վրայով շարժվեց դեպի Արծկե (Ադիլչևազ)։ Քառասուն օրվա պաշարումից հետո շահն ստիպված եղավ թողնել Վանը ու հեռանալ դեպի Պարսկաստան[42]։

Վանում և իր շրջակա գավառներում Սինան փաշայի կատաղած զորքերը կողոպտում են բնակչությանը ու գործադրում բռնի կամայականություններ։

«Իսկ զորքն,— գրում է Առ. Դավրիժեցին,— որք նստան Ղշլաղ ի վերայ երկրին (Վանայ) իբրև զգազանն տեսլեան Դանիելի՝ կերան, և մանրեցին, և զմնացորդսն ոտից կոխան արարին. փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և ի վերջին թշվառութիւն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ»[43]։

Հաջորդ տարին պատերազմական գործողությունները վերսկսվեցին։ Սինան փաշան Դիարբեքիրից 1605 թ. օգոստոսին շարժվեց դեպի Սալմաստ ու Խոյ։ Ուրմիո լճի մոտերքում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ։ Պարսկական բանակը ղեկավարում էր ինքը՝ շահը։ Ճակատամարտը վերջացավ օսմանցիների պարտությամբ։ Օսմանցիները և ինքը Սինան փաշան հապճեպ դիմեցին փախուստի, ռազմի դաշտում թողնելով «...զկահ և զկարասիս, զուղտս և զդրաստս, զմեթերս կերակրոց, և զգանձս սնդկով և սապատով. քանզի զչրագունսն վարեալ թողին և զվրանսն կառուցեալ՝ որպէս կանխաւ կառուցեալ էր...»[44]։

Օսմանցիների պարտությունը այն աստիճան ազդեց Սինան փաշայի վրա, որ նա Դիարբեքիրում նահանջի ժամանակ մահացավ 1605 թ. դեկտեմբերի 2-ին (21 ռեջեբ)[45]։

---

40 Առ. Դավրիժեցի, էջ 52։

41 17 դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն խոսելով հայերի բռնի Պարսկաստան տեղահանման մասին գրում է. «Երևանի և Թավրիզի միջև ընկած երկիրը ամբողջովին ավերվեց Պարսկաստանի թագավոր Շահ-Արաս Ա-ի կողմից, որպեսզի թուրքական բանակը, որն առաջանում էր այս կողմերից, ոչինչ չգտնի իր գոյությունը ապահովելու համար ու կործանվի։ Նա ուզեց ամբողջ երկիրը դարձնել ամայի և Պարսկաստան տարավ Ջուլֆայի և նրա գավառների բոլոր բնակիչներին՝ երիտասարդ և ծեր, հայրեր, մայրեր և երեխաներ». „Tout le pais entre Erivan et Tauris fut entièrement ruiné par Cha-Abas le I du nom, Roy de Perse, afin que l'armée des Turcs qui marchait de ce côté la ne trouva rien dequoy subsister, se détruisit d'elle-même. Il voulut rendre le païs désert et emmener en Perse tout les habitans de Zulfa et des environs, jeunes et vieux, les pères, les mères et les enfants, տե՛ս J. B. Tavernier, Les six voyages, Paris, 1692, էջ 44։

42 J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. XIII, էջ 59—60; J. H. Danişmend, նույն տեղում, էջ 236։

43 Առ. Դավրիժեցի, էջ 71։

44 Առ. Դավրիժեցի, էջ 77։

45 Ոմանք ասում են,— գրում է պատմագիր Ի. Փեչևին,— որ նա թույն է խմել ու մահացել, ոմանք էլ, թե նա մահացավ հուզմունքից ու թախծից», տես „Tarih-i Peçevi", հատ. 2, էջ 266։

Թե ինչ հետևանքներ ունեցան 1603—1605 թթ. պատերազմական գործողությունները հայ ժողովրդի և Հայաստանի համար, հանգամանորեն ներկայացնում է մեզ դարձյալ Առ. Դավրիժեցին։

«Եւ ի շարժմանէ այլոց երկուց տիեզերակալացս որք զարթուցեալք են ի պատերազմ,— գրում է նա,— եթէ Սարդարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որման աւերումն և մանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն թէ որման ծանրաբեռն ճարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ առին, նոյնպէս և զՍուրուսատն՝[46] որ զկնի զօրացն բերել տային, և թէ զորմն՝ և ի ձմեռն երիվարօրն իւրեանց ղշլաղ տային, կամ զմանդրումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն ճամբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին և վերայ աշխարհի. մեղ ոչ զոյ կար բուելոյ, այլ այնմ, որ բուլ զրազմութիւն աստեղաց. և ստեղծ զայնման անձինս որմ մատնեցան անողորմ և մարդադեմ զազանացն այնոցիկ»[47] (ընդգծումը մերն է—Մ. Ջ.)։

Պատերազմական գործողությունները և ջալալիների շարժումը Հայաստանում սկզբում նրա արևմտյան, այնուհետև արևելյան մասերում իրենց հետ բերեցին անլուր դժբախտություններ՝ սով ու համաճարակ, որը խլում էր տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։

Այսպիսի պայմաններում հայ ժողովրդի մի հատվածը, հատկապես առևտրա-արհեստավորական խավը գաղթում էր դեպի Կոստանդնուպոլիս, Թավրիզ, Սպահան, Թրակիա, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան և այլուր։

«Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր որ հանդեպ երեսաց իւրոց զտանել տեղի կեցոյ և ապրելոյ։ Ոմանք յՈւռումելի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերսն Պոնտոսի, ոմանք ի Թարվեզ և յԱարտաւել և ի գավառս սոցա»[48], գրում է Առ. Դավրիժեցին։

Չնայած գաղթողները ազատվում էին ֆիզիկական բնաջնջման վտանգից, սակայն ծանր ու չարքաշ էր նրանց կյանքը նոր բնակավայրերում։ Այսպես, Գրիգոր Դարանաղցին ականատեսի աչքով այսպես է ներկայացնում գաղթականների վիճակը Կոստանդնուպոլսում. «Ամենքն դեռ եկածք աղքատք և տնանկք և չքաւորք և մուրողք,—գրում է նա,— որ հոգայր զանձին իւրոյ զհոգ և ոչ զեղբօր կամ զազգատոհմի և կամ զրնկերի, վասն որոյ անխնամ մնալով...»[49]։

Մի այլ տեղ գաղթականների մասին նույն հեղինակը գրում է, որ նրանք են. «...աղքատք և մերկք և կարի չքաւորք, կեղեքած և թալանած՝..., որ զօրս օրէն հացիկն միայն հազիւ թէ կարողանային հնարել ոմանք մեծաւ ջանիւ»[50]։

1607—1608 թթ. ջալալիների նոր ապստամբությունները Թուրքիայի ասիական մասերում, օսմանցի ֆեոդալներին հնարավորություն չտվեցին նոր պատերազմական գործողություններ ձեռնարկել սեֆեվիների դեմ։ Միայն 1608 թ. վերջերին, երբ հիմնականում ճնշվեց ջալալիների ապստամբությունը մեծ վեզիր Կույուջու Մուրադ փաշայի կողմից, սուլթանական Թուրքիան հնարավորություն ստացավ մտածելու պարսկական ճակատի մասին։

1609 թ. աշնանը Կույուջու Մուրադի ձեռնարկած կամպանիան չիրականացավ ջալալիների դեմ մղված պատերազմներից հոգնած ենիչերիների ցուցարարած դիմադրության պատճառով, որոնք վախենում էին արշավանքի ընթացքում ընկնել սովի հիրանների մեջ։ «Ինչպես հնարավոր է պարեն գտնել էրզրումում, երբ այնտեղ սով է, ու մի կիլոգրամ գարին արժի հինգ դուկատ և պաքսիմատի (չորացած հացի) կիլոն մեկ դուրուշ,—ասում էին նրանք»[51]։

Չնայած դրան, 1610 թ. գարնանը մեծ վեզիր Կույուջու Մուրադը բանակի գլուխն անցած էրզրում—Ջալդրան—Խոյ—Սալմաստ ճանապարհով շարժվեց դեպի Թավրիզ։ Սակայն շահի առաջարկով մի շարք բանակցություններից հետո միայն օսմանյան բանակը հետ նահանջեց դեպի Դիարբեքիր։

---

46 Սուրուսաթ (Թուրք Sursat – բառացի տար ծախիր)։ Նշանակում էր պարենի պարտադիր մատակարարում բանակին պատերազմի ժամանակ։ Հավաքվում էր ցորենի, գարու, փայտի, անասնակերի և այլնի ձևով։ Նախատեսվում է պատերազմից հետո հատուցել վերցված պարենի գինը, սակայն իրականում դա երբեք չէր գործադրվում (տե՛ս M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü, c. III, İstanbul, 1955, էջ 300։

47 Ա ռ. Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 78—79։

48 Նույն տեղում, էջ 88։

49 Գ ր. Դ ա ր ա ն ա ղ ց ի, էջ 105—106։

50 Նույն տեղում, էջ 127։

51 J. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 158։

1611 թ. նոյեմբերի 20-ին (26 ռամազան 1021 թ.) կնքվեց նոր հաշտության պայմանագիր արևելյան այդ երկու պետությունների միջև։ Հաշտության համար հիմք ընդունվեց 1555 թ. սուլթան Սուլեյմանի և շահ Թահմասպի միջև Ամասիայում կնքված պայմանագիրը[52]։

Այսպիսով՝ Թուրքիան հրաժարվում էր Մուրադ III օրոք Անդրկովկասում կատարած իր նվաճումներից, Պարսկաստանին թողնելով Ադրբեջանը, Արևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը։ Իրանը պատրաստվում էր տարեկան 200 բեռ (yük) մետաքս հանձնել Թուրքիային որպես հարկ, որից սակայն շուտով նա հրաժարվեց։

Այսպիսով՝ հաշտության պայմանագրով Թուրքիան ճանաչում էր իր պարտությունն Իրանից։ Նա ստիպված էր այդ քայլին դիմելու, որովհետև, ինչպես իրավացիորեն նշում է Համմերը, «Ասիայի ապստամբությունների կործանիչ հետևանքները օսմանյան քաղաքականությանը նոր ուղղություն էին տվել և ստիպել նրան Հունգարիայի և Պարսկաստանի հետ հաշտություն կնքել...»[53]։

Որպես պարտության փոխհատուցում, Թուրքիան հաշտության պայմանագրում ստիպում էր Իրանին Ռուսաստանի դեմ իր որևէ հնարավոր գործողությունների ընթացքում խոչընդոտ չհանդիսանալ, այլ ընդհակառակն, օգնել։ Դա, իրոք, գիջում էր Իրանի կողմից Թուրքիային։ Ըստ էության, Սեֆյան Իրանը, ինչպես և Թուրքիան սաստիկ վախեցած էր Ռուսաստանի հզորացումից, չնայած հենց ինքը Շահ-Աբասը, ինչպես տեսանք վերևում, դեսպանություններ էր ուղարկել Ռուսաստան Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք կնքելու համար։

Կնքված հաշտության պայմանագիրը կրում էր ժամանակավոր բնույթ։ Ոչ Օսմանյան Թուրքիան էր ուզում հաշտվել Անդրկովկասի կորուստի հետ և ոչ էլ Սեֆյան Իրանը՝ իրեն համար ստորացուցիչ մետաքսահարկ վճարելու գաղափարի հետ։

Իրոք, Իրանը հաշտության պայմանագրի կնքումից հետո, ինչպես ասվեց, դադարեցրեց Թուրքիային տարեկան 200 բեռ մետաքս ուղարկելը։ Դա առիթ հանդիսացավ նոր պատերազմական գործողությունների։

1616 թ. դարձյալ օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասանկալա—Սողանլու, ճանապարհով շարժվեց դեպի Կարս։ Կարսի բերդը, որը շահի կողմից ավերված էր, ինչպես այդ մասին գրում է Քյաթիբ Չելեբին, տեղական բնակչության բռնի աշխատանքի լծելու միջոցով մի շաբաթվա ընթացքում վերանորոգվում է, որից հետո բանակը շարժվում է դեպի Երևան[54]։

Սեպտեմբերի 11-ին (29 շա'բան) 1616 թ. Երևանի բերդը նորից պաշարվում է օսմանյան բանակի կողմից։ 55 օր տևող անհաջող պաշարումից հետո, ընկնելով պարենային ու զինամթերային դժվարությունների մեջ, օսմանյան բանակը ստիպված է լինում թողնել պաշարումը և Կարսի վրայով հետ քաշվել դեպի Էրզրում[55]։ Օսմանյան բանակի հրամանատար Կարա-Մահմեդ փաշան ստիպված է լինում վերահաստատել 1611 թ. հաշտության պայմանագիրը։ Իրանը կտրականապես հրաժարվում է մետաքսի հարկը վճարելուց։ Այդ պատճառով սուլթան Ահմադը չեղյալ է համարում հաշտության վերակնքումը և պարսկական ճակատ է ուղարկում մեծ վեզիր սերդար, ծագումով հայ, Խալիլ փաշային։

Օսմանյան բանակում գտնվող Ղրիմի թաթարական խան Ջանիբեկ Գիրայը 40 հազարանոց զորքով ասպատակում է Գյանջան, Նախիջևանը և Ջուլֆան իր շրջակայքով։

1618 թ. սեպտեմբերի 10-ին Փուլի Շիքեստե կոչված վայրում, թաթարական խանը և օսմանյան բանակի մի մասը պարտության են մատնվում պարսիկներից, կրելով ծանր կորուստներ։

Պարտության լուրը ստանալով, սերդար Խալիլ փաշան որոշում է շարժվել դեպի Արդաբիլ և ստիպել շահին կնքել նոր հաշտություն, որը և իրականացվում է 1618 թ. սեպտեմբերի 26-ին (6 շեվվալ)։ Պայմանագրի կետերը, նույնն են ինչ որ նախորդը։ Միայն Սեֆյան Իրանը տարեկան 200 բեռ մետաքսի փոխարեն պարտավորվում է տալ միայն 100 բեռ։

Նոր պատերազմական գործողությունների հետևանքների մասին այդ տարիներին արտադրված մի ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «...Հայաստան երկրիս կոխան առնելոյ աւերեցին, զոր ոչ կարենք զաւերումն ընդ գրով առկանել...»[56]։

1618 թ. աշնանը կնքված հաշտությունը ևս երկար չտևեց։ Վերսկսված պատերազմական գործողությունների համար այս անգամ թատերաբեմ դարձավ Միջագետքը։ Օգտագործելով

---

[52] „Tarih-i Peçevi", հատ. 2, էջ 340։

[53] I. Hammer, Histoire de l'empire ottoman, հատ. VIII, էջ 191։

[54] Katip Çelebi, Fezleke, հատ. I, էջ 374։

[55] Ա. Դավրիժեցի, էջ 355—356։

[56] Սուրմեյան Արտավազդ արքեպիսկոպոս, Եվրոպայի հայերեն ձեռագրերը, էջ 20—23։

Բաղդադի թուրքական կայազորի հրամանատար Բեքիր փաշայի դավաճանությունը, Շահ-Աբասը շուտով գրավեց Բաղդադը։

Էրզրումի շրջանում Աբազա փաշայի ապստամբության նոր պոռթկումները (1623—1627 թթ.), Եգիպտոսում ծայր առած ընդվզումները, պարսկական բանակի առաջխաղացումը Միջագետքում կաշկանդում էին Թուրքիային ձեռնարկելու պատերազմական գործողություններ Իրանի դեմ՝ Անդրկովկասին տիրելու համար։

Այնուամենայնիվ, թուրքերը մի շարք ասպատակիչ ու ավերիչ արշավանքներ ձեռնարկեցին Միջագետքից դեպի Համադան։ Նրանք այդ քայլին դիմեցին 1629 թ. սկզբին՝ Շահ-Աբասի մահից հետո։

Համադանում թուրքերի բարբարոսությունը սահման չուներ։ Սերդար Խոսրով փաշայի հրամանով, որ ստացել էր «Անխիղճ Խոսրով» մականունը, վեց օր շարունակ թուրքերը անխնա ոչնչացրեցին պտղատու ծառերը, հրի մատնեցին ամբողջ քաղաքը, մասսայաբար քանդեցին տները, իսկ բնակչությանը հանձնեցին դահիճների ձեռքը։

Հայաստանի տերիտորիայում խոշոր մասշտաբի պատերազմական գործողությունները սկսվեցին 1635—1636 թթ.։

1635 թ. գարնանը սուլթան Մուրադը հսկայական բանակի գլուխ անցած, որը Դավրիժեցու մոտ նշվում է 700 հազար հոգի (սա բացահայտ սխալ է)[57], շարժվեց դեպի Արևելք։

Հուլիսի 3-ին (17 մուհարրեմ 1045 թ.) սուլթանական բանակը մտավ Էրզրում, իսկ 7 օր հետո Կարս։ Կարսից բանակը շարժվեց դեպի Էջմիածին (Ուչքիլիսե), այնուհետև շարժվելով Գյոկ-Կյումբեթի (այժմ Գեղանիստ) վրայով պաշարեց Երևանը։

Ամբողջ մի շաբաթ պաշարողների հրետանին, աղբյուրների վկայությամբ, կրակ էր տեղում պաշարված քաղաքի վրա, քանդելով նրա կավե պարիսպները[58]։ Երևանի հողե պարիսպները ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի սրամիտ նկատողությամբ ավելի շուտ կարող էին վնասվել անձրևից, քան թե թնդանոթից[59]։

1635 թ. օգոստոսի 8-ին (23 ռաբիուլ-ավվալ 1045 թ.) Երևանի խան Թահմազ Կուլին՝ Ամիրգունա խանի որդին ստիպված եղավ բերդը հանձնել թուրքերին[60]։ Երևանի բերդը հանձնվեց Մուրթազա փաշային, որը հայկական աղբյուրներում անվանվում է «խիստ հայասեր»[61]։

Թուրքական բանակը Երևանից Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ և սեպտեմբերի 12-ին (29 ռաբիուլ-ավվալ) մտավ ու հրկիզեց քաղաքը, կողոպտելով ու կոտորելով բնակչությանը, բայց քանի որ ձմեռը մոտենում էր սուլթանական բանակը ստիպված եղավ նահանջել դեպի Դիարբեքիր (4 հոկտեմբեր, 1635 թ.)։

Օգտվելով առիթից, գահ բարձրացած Շահ-Աբասի թոռ՝ շահ Սեֆին երկարատև պաշարեց Երևանը և 95 օր պաշարումից հետո 1636 թ. մարտի 30-ին գրավեց այն։

Այս պատերազմական գործողությունները նույնպիսի ավերիչ հետևանքներ ունեցան Հայաստանի և ամենից առաջ նրա արևելյան մասի համար, ինչպես և նախորդները։

«Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց,— գրում է Առաքել Դավրիժեցին,— աւերեալ ապականեցան աշխարհք՝ Արեւելք և Արեւմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակա գաւառօք. վասն զի երկոքին թագաւորքն իւրեանց հեծելօք և հետեւելօվք անդր գումարեալ կատարեցին զգործս իւրեանց և դարձան»[62].

1637—1638 թթ. պատերազմական գործողությունների թատերաբեմը կրկին տեղափոխվեց Միջագետք, որի հետևանքով վերջ ի վերջո Բաղդադը վերջնականապես ընկավ թուրքերի ձեռքը (25 դեկտեմբեր 1638, 18 շա, բան 1048 թ.)։

Բաղդադի պաշարման ժամանակ սուլթանի կարգադրությամբ Էրզրումի կառավարիչ Քենան փաշայի զորքերը, կայազորը օգնական թաթարական զորքերի հետ միասին, ասպատակեցին Արարատյան նահանգը։

---

57 Առ. Դավրիժեցի, էջ 316։

58 „Tarih-i Peçevi". հատ. II, էջ 316։

«یکبرص طوب تبیر ایله رورو شب امان ویرمیوب»

59 „... Ces murailles n'estant que de terre, la pluye y feroit plus de mal, que le canon".

60 „Tarih-i Peçevi", հատ. 2, էջ 438։

61 Գրիգոր Դարանաղցի, էջ 518։ Առ. Դավրիժեցի, էջ 317։

62 Առ. Դավրիժեցի, էջ 317։

«Դարձեալ յայսմ եւ թուին ՌՁԷ (1638), գրում է Գրիգոր Դարանաղցին,— կրկին զԵրեւան և զշրջակա գաւառքն գերեցուց տաթարն, այլ յորժամ թագաւորն գնաց անհուն զօրօք դէպի կողմն Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօքն գնալ ի յԱրզրումն, իսկ տէր Արզրումին Քենան փաշան զօրագլուխ լիցի ամենայն զօրաց ընդ հաւաքելոցն, զի միաբանութեամբ գնասցին ի վերայ Երեւանու գաւառացն և գերեսցեն առհասարակ զամենայն հայք և վտանկահաւատսն, և զամենայն անասունք զորս գտցեն՝ յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»63։

Բաղդադի գրավումից հետո, երկու պատերազմող երկրների միջև սկսվեցին նոր հաշտության բանակցությունները, որի հետևանքով 1639 թ. մայիսի 17-ին (17 մուհարրեմ 1049 թ.) կնքվեց հաշտության պայմանագիր Կասրե Շիրինում։ Ըստ այդ պայմանագրի Հայաստանը վերաբաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև։ Արևելյան Հայաստանը Արարատյան նահանգով, համաձայն պայմանագրի, մնում էր Պարսկաստանին, իսկ Բաղդադն ու Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի տիրապետության տակ։

Այս բաժանումն անփոփոխ մնաց մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այսինքն՝ 1828 թվականը։

1639 թվականի հաշտությամբ, Հայաստանում համեմատաբար երկարատև խաղաղություն հաստատվեց և վերջ տրվեցին թուրք-պարսկական պատերազմներին։ Ստեղծվեցին որոշ խաղաղ պայմաններ Հայաստանի տնտեսության, և նախ և առաջ, գյուղատնտեսության վերականգնման համար։

М. К. ЗУЛАЛЯН

ТУРЕЦКО-ПЕРСИДСКИЕ ВОЙНЫ НА ТЕРРИТОРИИ АРМЕНИИ И ИХ ПОСЛЕДСТВИЯ (1590—1639 гг.)

Резюме

В статье на основании малоизвестных армянских, турецких, персидских и иных источников рассматриваются вопросы политической истории Армении указанного периода.

По Константинопольскому мирному договору (1590 г.). Ирану был нанесен ощутимый удар. Согласно договору, Западная Грузия, Армения, Азербайджан попали под иго турецких завоевателей.

Османское владычество принесло завоеванным странам Закавказья жестокую эксплуатацию трудящихся масс, режим произвола и насилия, религиозные гонения. Все это вызвало глубокое недовольство среди широких кругов населения, а также среди местных крупных и мелких феодалов. В таких условиях феодалы Закавказья обратились к новому шаху Ирана за помощью.

В начале XVII века, используя ослабление Османской империи (в это время Турция была охвачена мощным движением джелалиев), Шах Абас начал новые военные действия против Турции, чтобы вернуть обратно области, захваченные Турцией по мирному договору 1590 г. В результате захвата Армении шах был вынужден под натиском огромной турецкой армии отступить. По приказу шаха подлежали выселению («Великий Сюргюн») в Иран около 350 тысяч армян.

Война еще не окончилась, как новое бедствие — голод — охватил всю Малую Азию и Закавказье. В результате часть армянского народа была вынуждена покинуть пределы родной страны.

В 1639 г. между Ираном и Турцией был заключен мирный договор, согласно которому снова был подтвержден раздел Армении, произведенный в 1555 году по Амасийскому договору.

63 Գր. Դարանաղցի, էջ 578։